ԲՈՒԺԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՆԱՅՈՒՄ։

(Heiepaedagogische Anstalt in Jena)

Ց. Բար. Մայիս ամսին Բուժական-Մանկավարժական Դպրոցն է բացուում Ենայում պ. Տրիւբերի տեսչութեամբ և պրոֆեսոր Դր. Թայնի (տեսուչ համալսարանական մանկավարժական սեմինարիոնի) և պրոֆեսոր Դր. Բիսվանգերի (տեսուչ Ենայի գժանոցի) ընկերակցութեամբ։ Այդ հիմնարկութեան նմանը ոչ թէ միմիայն Գերմանիայումն, այլ նաև ամբողջ երկրագնդիս վերայ չենք կարող գտնել։ Այդ դպրոցի նպատակն է այնպիսի մանուկների կրթութիւնը ստանձնել, որոնք, մի որ և իցէ հոգեբանական պատճառից, անընդունակ են դպրոցական դասատուութեան և կրթութեան հետևել և որոնց կրթութեան դործում կարևոր է անհատական եղանակ (individuelle Behandlung) դործադրել։ Այդ դպրոցի ձգտումն է մանկան հոգեկան կեանքի նորմալ ընթացքի իսանդարիչ տարրերն ոչնչացնել, հիմնովին խորտակել և նորա հոգեկան աշխարհն կանոնաւորելով, ընդունակ դարձնել դպրոցական դասատուութեան և կեանքի համար։ Հէնց այդ պատճառով պէտք է ընդունին այդ դպրոցում միմիայն 8 մինչ 12 տարեկան մանուկներ։

Այստեղ պէտք է ուսուցիչն ոչ թէ միայն փորձած մանկավարժ անդիտանալ, այդ նաև բժիշկ, իսկ բժիշկն էլ—ոչ թէ միայն բժիշկ խօսքի դործածական մտքով, այլ և մանկավարժ։ Ահաւասիկ մենք դանում ենք այս դէպքում մի դաղափարի իրադործումն, որը բաւականին հին է և դորա իրադործման մասին շատ փորձեր են եղել, բայց մի արժանի հետևանքի չեն հասցրել։ Ենայի այդ վերոյիշեալ դպրոցն ունի այն առաւելութիւնը, որ նորա կառավարողները զուտ մասնագէտներն։ Բաւական է վիշել այս դէպքում միայն պրոֆ. Դր. Թայնին, որը նշանաւոր Ցիլլերի ամենաեռանդուն աշակերտներից մէկն է և ամբողջ դիտական մանկավարժական ուղղութեան ղեկավարողն, իսկ պրոֆ. Դր. Բիսվանգերի հեղինակութիւններն պսիխատրիայի (Psychatrie) դրականութեան մէջ պատուաւոր տեղ են բռնում։ Ինչ պարոն Տրիւբերին է վերաբերում, նա մի Բրեմենցի երիտասարդ է, 5 տարի իւր հայրենիքի ժողովրդական ուսումնարաններում ուսուցչական պաշտօն վարելուց յետոյ, ուղևորուում է Ենայ մանկավարժութիւն ուսումնասիրելու նպատակով։ Նա այդտեղ իրան ցոյց է տալիս բաւականին ընդունակ և հեռանդուն երիտասարդ, որով և գրաւում է ճեմարանական սեմինարիոնի տեսչի ուշադրութիւնը։ Տրիւբերն այժմ պրոֆ. Թայնի մանկավարժական երիտասարդ դպրոցի ամենաեռանդուն աշակերտներից մէկն է և ունի մի քանի մանկավարժական գրուածներ, որոնց մէջ նշանաւոր տեղ է բռնում «Կրթութիւն ընկերու-

թեան միջոցով․ վերնագրով ուսումնասիրութիւնը։ Այդ վերջինի գլխաւոր միտքն այն է, որ ոչ թէ միայն անհատական հոգեբանութիւնն էման-կավարժութեան օժանդակիչ գիտութիւն, այլ նաև սոցիալական, ընկերա-կան հոգեբանութիւնը։ Այդ գաղափարն արծարծել են, նորագոյն ժամա-նակներում, Վիլլման իւր մանկավարժութեան մէջ և Լինդներն [1]) իւր «Մանկավարժութիւնը որպէս գիտութիւն» երկասիրութեան մէջ։

Ապագայում թերևս աւելի ունենանք «Բուժական — Մանկավարժական Դպրոցի» կազմակերպութեան և ընթացքի մասին մի առանձին յօդուածում ընդհարձակօրէն խօսել։

Բերլին.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՐԻՆԻՑ

Կարին. 12 մայիսի 1890 Թ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Քանի որ նախորդ թղթակցութեանս մէջ [2]) մի քանի անգամ Սա-նասարեան անունը փչեցինք, հարկ կը համարեմ քաղաքիս մէջ հիմնուած այդ վարժարանին վրայ կարելի եղածին չափ ճշգրիտ տեղեկութիւն տալ Արարատեան հայոց։

Սոյն վարժարան եօթը դասակարգի բաժանուած է և ամբողջ ուսա-նողաց թիւը 130, որոց 20 միայն ձրիավարժ են և մնացեալ 110 ուսա-նողք թոշակաւորներ, բնականաբար հարուստներուն զաւակունք տեղացի և ուրիշ զանազան գաւառներէ։

Ընդհանուր ծախուց գումարը է 4000 ոսկի օսմանեան, որ կը կազմւի՝ թոշակներէն ստացուած 3000 օսմ. ոսկի, և 1000 օսմ. ոսկի (մօտ 8500 ր.), որ աղա Սանասարեան իւր կողմանէ կը վճարէ։

Տեսչութեան նախկին ծրագրին համաձայն ամբողջ շրջանը Սանա-սարեան վարժարանում 7 տարի պիտի տևէր, բայց ի վերջոյ երկու տարւոյ յաւելում մը ըրին, հիմայ ղրոյց կայ թէ 12 տարիի պիտի վերածեն։

Ապահովաբար վերև նշանակած պատկառելի գումարին փոխարէն ազգը ընդհանրապէս և աղա Սանասարեան մասնաւորապէս շատ արդիւնք

---

[1]) Լինդների «Մանկավարժութիւնը որպէս գիտութիւն» երկասիրութեան ա-ժանի կտորներից մէկն փոխադրել եմ հայերէն և շուտով լոյս կը տեսնէ Մոսկւա-յում հրատարակւող «Ջանդիսխս» մէջ։

[2]) Տե՛ս «Մուրճ» 1890 Թ. № 3.